Արթիկ համայնքի <<Պեմզաշենի նախադպրոցական
ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ-ի
Տնօրենի 2025թվականի փետրվարի 7-ի N 7-Լ հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Պեմզաշենի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին*

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդներին ներկայացվող պահանջները /չափորոշիչները/ | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը /նյութերը/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Պեմզաշենի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստ /0,25 դրույք/ | **1. Որակավորման պահանջները՝**<br>Հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>**2. Ընդհանուր պահանջները.**<br>**Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է՝**<br>1)տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2)իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br>ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Նախադպրոցական կրթության մասին>>, <<Լեզվի մասին>>, <<Երեխայի իրավունքների մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Լիցենզավորման մասին>>, <<Տեսչական մարմինների մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> օրենքները, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգիրքը, <<Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը>>, Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը,<br>բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները, ուսումնամեթոդական փաստաթղթերի վարման սկզբունքներին: | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1)Դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,<br>2) Դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,<br>3) Տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեթության իրականացմանը,<br>4) Դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)Դիմում (Ձև 1),<br>2)Անձը հաստատող փաստաթուղթ,<br>3)Կրթության մասին փաստաթուղթ(դիպլոմ),<br>4)Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),<br>5)Ինքնակենսագրություն (Ձև 4),<br>6)Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,<br>7)Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,<br>9)Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):<br><br>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթերով: |

| Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը | Դիմումների և փաստաթղթերի ընդունում | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |
|---|---|---|
| Վայրը գ.Պեմզաշեն 7փողոց շենք 4 <<Պեմզաշենի նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ Մարտի 14-ին, ժամը 11:30 | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Արթիկ համայնքի <<Պեմզաշենի նախադպրոցական ուսումնական հաստատություն>>համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, հեռ. 094016120: Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում /Կրթության, գիտության, սպորտի նախարարի <<22>>հոկտեմբերի 2024թվականի N 1981-Ա/2 հրաման/: Փաստաթղթերի ընդունումը ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: | 2025թվականի մարտի 10-ը |